

Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

1920 հոկտեմբեր 30 Թուրքերը գրավում են Կարսը:

նոյեմբեր 5 Թուրքերը գրավում են Ալեքսանդրապոլը:

նոյեմբեր 24 Ընկնում է դաշնակցական հին կառավարությունը և կազմվում է նոր կառավարություն Ս. Վրացյանի նախագահությամբ:

նոյեմբեր 27 ՌԿ(Բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն Վ. Ի. Լենինի նախագահությամբ քննարկում է Հայաստանի և Վրաստանի նկատմամբ ունենալիք քաղաքականության հարցը:

նոյեմբեր 29 Հայաստանում հաստատվում է խորհրդային իշխանություն:

դեկտեմբեր 2 Կնքվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

դեկտեմբեր 2 Դաշնակցական կառավարության պատվիրակությունը Ալեքսանդրապոլում թուրքական զավթիչների հետ կնքում է Հայաստանը անդամահատող և ստրկացնող ապօրինի պայմանագիր:

դեկտեմբեր 2 Վ. Ի. Լենինը ողջույնի հեռագիր է հղում Հայաստանի Ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահ Ս. Կասյանին Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու առթիվ:

դեկտեմբեր 5 ՀԽՍՀ Հեղկոմի առաջին հրամանով ստեղծվում է ՀԽՍՀ Ռազմական գործերի ժողովրդական կոմիսարիատ:

դեկտեմբեր 6 ՀԽՍՀ Հեղկոմի որոշումով հանրապետության սահմաններում պետական լեզուն ճանաչվում է հայերենը:

դեկտեմբեր 10 ՀԽՍՀ Հեղկոմը որոշում է ընդունում բանկերի ազգայնացման մասին:

դեկտեմբեր 13 ՀԽՍՀ

Ներքգործող կոմատի հրամանը հին վարչական հիմնարկները և պաշտոնները վերացնելու մասին:

դեկտեմբեր 13 Վ. Ի. Լենինը ընդունում է ՀԽՍՀ Հեղկոմի անդամներ Ա. Մռավյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին:

դեկտեմբեր 17 ՀԽՍՀ Հեղկոմի հրամանով Հայաստանի բոլոր մշակութային-կրթական հիմնարկները պետականացվում են:

դեկտեմբեր 18 ՀԽՍՀ

Արդարադատության ժողովրդական կոմիսարիատի հրամանով վերացվում են հին դատարանները:

դեկտեմբեր 21 ՀԽՍՀ Հեղկոմի հրամանագրով Խորհրդային Հայաստանի սահմաններում վերանում է «Ռուսական կայսրության հավաք օրինաց»-ը այն փոփոխություններով, որ մտցրել էին ժամանակավոր կառավարությունը, անդրկովկասյան կոմիսարիատն ու սեյմը, Հայաստանի դաշնակցական կառավարությունը:

դեկտեմբեր 25 Դաշնակցականները կազ-

մում են այսպես կոչված «Ինքնավար Սյունիքի կառավարություն» (1921 թվականի ապրիլի 26-ին այն վերակազմվում է և անվանվում «Լեռնահայաստանի կառավարություն»):

դեկտեմբեր 25 Խորհրդային Հայաստանում կազմակերպվում է առաջին մասսայական շաբաթօրյակը:

դեկտեմբեր 25 Դաշնակցությունը կազմում են «Ինքնավար Սյունիքի կառավարություն»:

դեկտեմբեր 28 ՀԽՍՀ Հեղկոմը ընդունում է որոշում հողերի ազգայնացման մասին:

1921 հունվար 10 ՀԽՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ անտառների ազգայնացման մասին:

հունվար 11 ՀԽՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ Հայաստանի բոլոր օգտակար հանածոները, հանքային ջրերը, լճերը ազգայնացնելու մասին:

հունվար 21 ՀԽՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության խորհուրդ ժողտնտխորի կազմակերպելու մասին:

հունվար 22 Ծնվեց հայ կոմպոզիտոր, դաշնակահար Աննո Բաբաջանյանը: (Վախճ. 1983թ.-ին):

հունվար 23 Տեղի է ունենում Երևանի ժողովրդական համալսարանի հանդիսավոր բացումը, որը 1923թ. վերանվանվեց Պետական համալսարան:

փետրվար 5 ՀԽՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ էջմիածնի մատենադարանի և թանգարանի բազայի վրա Հայաստանի կուլտուրա-պատմական գիտական ինստիտուտ հիմնելու մասին:

փետրվար 9 Երևանում ձերբակալվեց Նիկոլ Աղբալյանը:

փետրվար 12 Սկսվում է Վրաստանի մենշևիկյան կառավարության դեմ Լոռու նախկին «չեզոք գոտու» աշխատավորության ապստամբությունը, որը

փետրվարի 16-ին ավարտվում է լիակատար հաղթանակով:

փետրվար 13 Դաշնակցականների հակահեղափոխական խռովության սկիզբը:

փետրվար 18 Տեղի ունեցավ հակաբոլշևիկյան ապստամբություն Հայաստանում:

փետրվար 25 Խորհրդային կարգերի հաստատումը Վրաստանում:

փետրվար 26 Դաշնակցականների հակահեղափոխական խռովության դեմ կռվելու նպատակով Դիլիջանում ստեղծվում է Դիլիջանի և Դարաքիլիսայի շրջանների ռազմա-հեղափոխական կոմիտե Գ. Աթաբեկյանի նախագահությամբ:

(Շարունակելի)



Մշակութային

ՎԻՅԵՐ



ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆ

Իվայելումն մեր ընթերցողների ներկայացնում ենք գրող եւ թարգմանիչ Կարայիս Սուրենյանի օրագրությունից այս հատկանշական հատվածը «Ձարթօնք» օրաթերթի խմբագրապետ, Հայ դատի առաջամարտիկ, Ռամկավար ազատական կուսակցության առաջնորդներից Գերսամ Ահարոնյանի մասին: Եվ ինչպես հեղինակի մյուս գործերում, այստեղ եւս նկարագրվածը, ավելի ճիշտ՝ վերարտադրվածը երկխոսության միջոցով հերոսի նկարագիր-կերպարը չէ միայն, այլեւ դրա տակ եւ դրանից անդին ազգային ու մարդկային իրողական մտահոգությունները, երկուսն էլ նրբորեն, կարծես աննկատ միահյուսված իրար: Անձնականը եւ ազգայինը, կերպարայինն ու համամարդկայինը: Ֆիլիզորանի վարպետ է Կ. Սուրենյանը, պոլիֆոնիայի վիրտուոզ, որ գիտի մի քանի փոխասացություններով կերտել մարդկային կերպարը եւ, միեւնույն ատեն, պեղել մարդկային եւ հասարակական կյանքի խորհորատները եւ ընդհանրացումներ կատարել: Զգայնություններն ու զգացականությունը միշտ պահելով մտքի տիրապետության տակ, միշտ պահելով վավերականությունը ներկայացվածի:

Ասենք, որ շուտով, առաջիկա դեկտեմբեր ամսին, «Սարգիս Խաչենց» հրատարակչության կողմից լույս կտեսնի Կ. Սուրենյանի օրագրությունների առաջին հատորը: Հիշեցնենք նաեւ, որ Գերսամ Ահարոնյանը վաղաժամ մահացավ, հազիվ 65 տարեկանին, լիբանանյան պատերազմի ամենադժոխակ օրերին, 1980 թ.: Ավելի ճիշտ պիտի լիներ ասել՝ քաղաքական, ազգային, կուսակցական ու մարդկային հակասությունների սարդոստայնում նա կործանվեց...

Այդ ժամանակ երկու անգամ՝ Գեւորգ Զ կաթողիկոսի հուղարկավորության, հետո էլ, մանավանդ, Վազգեն Ա կաթողիկոսի ընտրության ու զահակալության առիթով (1954-1955) սփյուռքահայ հյուրերի առաջ բացվեց երկաթե վարագույրը այն կողմից: Այս կողմից փակ էր մնում դուռը (ու դեռ բավական երկար ժամանակ փակ էր մնալու), եւ ներգաղթից հետո գրեթե մի ամբողջ տասնամյակ աշխարհից կտրված հայրենադարձներ, նույնիսկ Լեւինականից կամ Կիրովականից գալով, ձգտում էին տեսնվել հյուրերի հետ՝ ժանոթների հանդիպելու կամ արտասահմանում մնացած իրենց հարազատներից որեւէ լուր իմանալու հույսով: Իսկ 1949-ին Սիբիր արքայազններն ու «մոռացվածները»... Ի դեպ,

այսօր, հիսուն տարի հետո, ասվում է, որ ճիշտ էին հայրենադարձների մասին այն չարագուշակ շշուկներն էլ Ստալինի մահվանը նախորդած ամիսներին: Եթե չմեռներ Ստալինը, ուրեմն, վայ թե այդ հյուրերն այստեղ մի նմուշ անգամ չգտնեին այն հարյուր հազար հայրենադարձներից, որոնք այնպիսի խանդավառությամբ ներգաղթել էին իրենց հայրենիքը՝ Հայաստան...

Իմացա, որ Գերսամ Ահարոնյանն էլ հյուր է եկել Բեյրութից: Հուլիս լուր էր: Տասներեք տարի չէի տեսել նրան՝ վաղ պատանեկության այն երիտասարդ ուսուցչին, որ իր հովանավորող հմայքի տակ էր առել ինձ Մելգոնյանում առաջին տարիներին, նաեւ իր «խորունկ իդեալը թելադրելով» (թեպետ երբեմն էլ նեղանում էի նրանից): Կարոտով գնացի տեսնելու նրան «Ինտուրիստ»-ում, որ դեռ նախկին այն հյուրանոցն էր՝ հետագայում «Երեւան» կոչված: Բախտս բերեց, իսկույն էլ, հենց որ մտա հյուրանոց, տեսա: Սպասարահի խորշում նստած էր մի քանի ուրիշ հյուրերի հետ: Ոչ թե նստած, կիսովին ընկողմանած էր բազմոցի անկյունում, բեժ գույնի կոստյումով: Զշարժվեց: Միայն ժպիտ երեւաց այնքան ծանոթ այդ դեմքին, կոկորդում մի խոսք կլկլաց՝ «ինչպե՞ս ես» ասելու նման: Գրպանից մի տուփ «Չեսթրոֆիլդ» սիգարետ զգեց առջեւի սեղանին դեպի իմ կողմը:

- Ի՞նչ կընես,- ասաց:
- Բան մըն է, կընենք կոր,- փորձեցի ինքս էլ ժպտալ:
- Կտեսնվի՞նք,- ասաց:

Շատ տարօրինակ էր: Գուցե անժամանակ էի եկել: Բայց հենց այնպես ընկողմանած էր պարզապես, չէր երեւում, ասենք, որ մի լուրջ խոսակցություն խանգարեցի: Ու հենց այնպես էլ ժպտաց այդ դիրքում: Կարծես ինչ-որ վերելից ու հեռվից լիներ այդ ժպիտը: Ու ժպիտի հետ «Չեսթրոֆիլդ»-ը՝ ալարկոտ մի շարժումով իմ կողմը զգված... «Կտեսնվի՞նք»: Չեմ էլ ուզում տեսնվել այլեւս:

Բայց մեկ կամ երկու օր հետո էր՝ տեսա Էջմիածնում: Խիստ խճողված տաճարում արարողություն, բակն էլ խճողված, երեւի հոգնել, դո՛ւրս է եկել մի պահ, քաշվել մի կողմ՝ ահա ճերմարանի մոտ իր բարձր հասակով, նույն բեժ կոստյումով: Ժամանակին այդ բարձր հասակով սքանչելի վիլեյբոլ էր խաղում, ցանցի վերելից իր «իջի՛ր» հարվածները ոչ ոք չէր կարող բռնել: Մրցումներին աղջիկներն էլ գալիս, խաղաղաշտի մի կողմը շարվում էին դիտելու, նրանց հիացմունքի կուռքն էր «պարոն Գերսամը»: Ահա կանգնեց ճեմարանի առաջ: Մոտենա՛ւմ: Սիրտս մղեց կրկին, մոտեցա: Իսկապես հոգնած դեմք: Ժպտաց: Հոգնածության հետ մի դժգոհ երանգ էլ կար այդ ժպիտի մեջ:

- Դո՛ւն ալ պիտի զանգատիս,- ասաց:

Եվ իսկույն էլ, երեւի զարմանք տեսնելով դեմքիս, կարծես «բացատրելով» այդպես միանգամից երեսիս նետած իր հարցը, դժգոհություն հայտնեց, որ հայրենադարձ ծանոթները «հազիւ բարեւ մը ըսած» սկսում են զանգատվել իրենց քաշած տառապանքներից: Ինչ է, դրա՞ համար է եկել Հայաստան, այն էլ առաջին անգամ: Հատկապես տվեց իր մի հին մելգոնյանցի դասընկերոջ անունը, ինձ անծանոթ, չտասպել է նույնիսկ Լեւինականից գալ իրեն տեսնելու, քանի օր է արդեն «ուռեցուցած» է իր գլուխը, ինչ է ուզածը՝ չգիտես:

- Դո՛ւն ալ պիտի զանգատիս...
- Amor fati,- ասացի:
- Ա՞յդ ինչ է:
- Ճակատագրի սեր: Որ շատ չտանջվիս... Լավ, մեկ կողմ ձգեմք այդ հարցը, ամեն մարդ իր ճակատագրին հետ:

Քիչ առաջ գիտե՞ս ինչ հիշեցի, պարոն Գերսամ: Սքանչելի վոլեյբոլ: Իմացա, որ քանի տարի արդեն «Զարթօնք» թերթի շեֆն ես, ռամկավար գործիչ, այդպես ալ կենթադրեի, որ պիտի ըլլար: Կերեակայեմ հիմա քու «իջիր»-ներդ հրապարակախոսության մեջ...

Կարծես գոհունակ էր ժպտը այս անգամ, բայց նաեւ մի տեսակ անտարբեր-հեզմոտ, եւ կրկին ունեցա այն տպավորությունը, թե այդ ժպտը ինչ-որ վերելից էր ու հեռվից:

- Դուք հոս չեք գիտեր ինչ է հրապարակախոսությունը,- ասաց:- Կնային ձեր թերթերը, իսկական լրատվություն անգամ չունիք: Փաթաթեսին այսքան-այնքան բերքը լուր չէ: Լուրը փաթաթեսի բերքին փճացած ըլլալն է:

Ճիշտ էր ասածը, բայց դա ի՞նձ ասելիք բան էր: Ի՞նչ պատասխանեմ: Չէ, խոսակցություն չի ստացվում: Ինչպիսի՞ խոսակցություն: Այդ էլ չգիտեմ արդեն: Ուրիշ բան էի պատկերացնում, բայց ի՞նչ: Ես ի՞նչ պատասխանեմ իր այդ ասածին, որով այդպես անակնկալորեն, անտեղիորեն հենց իմ գլխին «իջիր» արեց: Մենք այստեղ իրար մեջ խուսափում ենք այդպիսի բաների մասին խոսելուց, դրսի մարդո՞ւ հետ պիտի խոսեմ: «Դրսի մա՞րդ»: Գերսամ՞ը: Մեր, իմ Գերսամ՞ը... Այդ միտքը ցնցեց ինձ: Ցնցեց մի կռահումով ճակատագրական: Մի քանի բան էլ ասվեց, էլ չեմ հիշում ինչ: Այդ կռահումս ճեղք էր տեսել իմ եւ նրա միջեւ: Ասե «ներսի» եւ «դրսի» միջեւ մի վիճի, որի խորությունը դեռ չէի գզում, ինչպես խորունկ վերքի բուն ցավը դեռ չեմ գզում առաջին վայրկյանին: Առաջին զգացումս այն էր, որ տարբեր մարդիկ ենք դարձել: Նա՛ երեւի իր ճակատագրի ուղիղ ընթացքով այնտեղ, ես՝ իմ ծոված ճակատագրի խորդուբորդություններով այստեղ: Լավ է, կարճ տեւեց մեր այդ խոսակցությունը: Երկու հոգի, մուգ հագուստից ու դեմքերից երեւում է՝ «դրսի մարդիկ» նույնպես, եւ նույնպես, երեւի, տաճարում հանդիսավոր արարողությունից հոգնած, բակ ելած շունչ քաշելու, մոտեցան, չգիտեմ ինչ ասացին, ես հրաժեշտ տվի: «Կտեսնվի՞ր»...

Չի ուզում գանգատ լսել: Եվ անշուշտ՝ ոչ միայն Գերսամը: Հասկանալի է հոգեբանորեն. ընդհանրապես հաճելի չէ գանգատ լսելը, իսկ առավել ու առավել եւս՝ երբ հայրենաբաղձ սփյուռքահայ է, որ պատեհությունն է ունեցել կարճ ժամանակով հայրենիք այցելելու, այն էլ երկար տարիներով արգելափակ երկաթե վարագույրից ներս, եւ բոլորովին ուրիշ են զգացումները: Բայց հասկանալի է նաեւ երկաթե վարագույրով ներսում արգելափակված հայրենադարձի կարոտը՝ այն աշխարհից հանկարծ հայտնված հարազատին կամ մտերիմին տեսնելու եւ, բնական է, զոնե նրա առաջ բերանը բացելու (դա իբր թե վտանգավոր չէ) եւ սիրտը պարպելու իր կրած տառապանքների մասին: Այդ երկու «հասկանալիները», սակայն, վերածվում էին առավել կամ նվազ գիտակցվող, արտահայտվող կամ չարտահայտվող անհասկացողության, երբ հայրենադարձն ու սփյուռքահայը հանդիպում էին իրար, որովհետեւ հանդիպելով իրար՝ զգում էին, որ տարբեր մարդիկ են դարձել: Այն ճեղքն էր «դրսի» եւ «ներսի» միջեւ, այն վիճը, որի ճակատագրական խորությունն ավելի զգալի էր դառնում հետագա տարիներին, երբ սփյուռքահայի առաջ «տուրիստական» այցելության համար ավելի հաճախակի էր բացվում երկաթե վարագույրի դուռը այն կողմից, իսկ արգելափակված հայրենադարձին դա մի թաքուն դառնություն եւ նույնիսկ ջղայնություն էր պատճառում:

Բայց խնդիրն ավելի խորն էր: Որպես «տուրիստ» եկող սփյուռքահայի մեջ էլ կար մի թաքուն զգացում, որ դառնություն ու ջղայնություն չէր անշուշտ, այլ գուցե մի քիչ կարեկցանք ընդհանուր «մխիթարիչ» խոսքերով, երբ լսում էր հայրենադարձի գանգատները, բայց մանավանդ՝ զուտ մարդկայնորեն շատ հասկանալի այն բուն թաքուն զգացումը, թե ինքը գերծ է մնացել այդպիսի ողբերգական ներգաղթի գոհ դառնալուց, գուցե նույնիսկ, ով գիտե, մինչեւ Սիբիր ընկնելուց: Չէ, սխալվում եմ, այնքան էլ թաքուն չէր այդ զգացումը: Ոմանք նույնիսկ բացեփառ արտահայտում էին այն (անձամբ եմ լսել), հատկապես նրանք, ում «թիվը ելած չէր» ներգաղթի ցուցակներում, եւ իրենց «դժբախտ» էին համարել այն ժամանակ, երբ ողջերթի խումբերան բազմության մեջ կանգնած նայում էին խանդավառ «երջանիկներով» լեփ-լեցուն նավին, որ ճամփա էր ելել դեպի հայրենիք: Իսկ ընդհանրապես այդ զգացումն արտահայտվում էր հենց այն «ինչ-որ վերելից ու հեռվից» ժպիտով, երբ ականջ էին տալիս գանգատներին: Այսինքն թե՛ իրենք ազատ աշխարհի մարդիկ են, իսկ խեղճ հայրենադարձներ, ինչէ՛ր են քաշել ստալինյան բռնապետության տակ, դեռ անագատ այս ռեժիմի տակ էլ ստիպված են ապրել, եւ իրենց ասելով՝ խորականության էլ են ենթարկված հայրենիքում:

Ավելի եւս խորն էր սակայն խնդիրը: Այո, հայրենադարձների հանդեպ այդ խորականության վիճին էլ կար մյուս կողմից, եւ դա էլ սովետական ռեժիմի հետեւանք էր, ոչ միայն «տեղացի» տառապած ժողովրդի վերաբերմունքով (այդ օրերին նշանավոր դարձած արտահայտությունը՝ «կարմիր խնձոր ուղարկեցինք, որ եկաք, ինչի՞՞ եք եկել, վա՞տ էիք ապրում էնտեղ»), այլեւ հենց պետականորեն անվստահելիության վերաբերմունքով հայրենադարձների հանդեպ (եթե այդ աչքով էին նայելու, էլ ինչո՞ւ էին արտասահմանից բերել խելակորույս հայրենասիրությանը խանդավառված հարյուր հազար «անվստահելիներին»): Սփյուռքահայերին անշուշտ թե անհասկանալի պիտի թվար այդ խորականությունը («իրենց ասելով»): Սփյուռքահայերը Հայաստան էին այցելում, ըստ էության, ոչ թե կամ գուցե ոչ այնքան մղված հարազատներ կամ հին բարեկամներ տեսնելու կարոտից, այլ բուն մղումը տարագիր հայի անմար մնացող հայրենաբաղձությունն էր, այն ընդհանուր կարոտը, որ ձգտում էր գեթ մասամբ հագեցնալ հայրենիքը տեսնելով թեկուզ մի կարճ ժամանակ, ուխտավորի նման, ոգեշնչվելու, հայրենաբաղձության կանթեղին մի քիչ էլ յուղ լցնելու սրբազան մեռոնի նման, որով ավելի վառ մնա այդ կանթեղը՝ որպես տարագրության մեջ սփոփանք եւ հավելյալ եռանդ տվող լույս: Եվ նկատելի էր, գուցե նաեւ հասկանալի, որ ավելի ձգտում էին «հայրենի» նշանավոր մարդկանց տեսնել, դա ոգեւորիչ էր: Թեկուզ այնքան էլ նշանավոր չլինեին, բայց պաշտոնավոր, ասենք՝ համալսարանի պրոֆեսոր կամ դպրոցի տնօրեն: Իսկ հայրենադարձները, նույնիսկ նրանք, ովքեր «այնտեղ» վաստակ էին ունեցել ժամանակին, կարծես «հայրենի» չէին նրանց համար, որքան էլ կյանք ապրած լինեին այստեղ, գուցե մի նոր վաստակի էլ դժվար ճանապարհը բռնած. դե՛հ, երեկվա «ծանոթ տղաքը» չէի՞ն վերջապես: Երբեմն էլ ոմանք, նույնիսկ, իր մտահոգությունները հայտնող հայրենադարձի գլխին քարոզ էին կարդում, թե պետք է «հարմարվել» երկրի պայմաններին, առանց դույզն պատկերացում ունենալու, թե խորքում ինչ է նշանակում սովետական երկրի պայմաններին «հարմարվել»: Էլ չասեմ, թե «հայրենի» նշանավորներից

ու պաշտոնավորներից ոմանք, երեսանց սիրալիր, խորքում ինչ վերաբերմունք ունեին նրանց հանդեպ: Դա մենք միայն գիտեինք մեր փորձառությամբ, իսկ դրա մասին ակնարկել անգամ չէինք կարող նրանց, վտանգավոր էր, կարող էին իրենց «ազատախոսությամբ» մեզ մատնած լինել ակամա, միամտորեն:

Այս ամբողջ հոգեբանական բարդ, հակասությունների կծիկ դարձած թնջուկը նշանավորում էր մի զարտուղի, պարադոքսալ երեւոյթ, մի նոր գոյացություն հայ իրականության մեջ, որի նմանը երեւի չի եղել մեր պատմական անցյալում: Դա 1946-1948 թվականներին ներգաղթած հայրենադարձների արտառոց կարգավիճակն էր այդ երկու «վիհերի» միջև: Հայության մի սովոր խավ՝ հարյուր հազարանոց, որն սփռուքից բերվեց հայրենիք, արդեն իսկ բզիկ-բզիկ մասնատված հայ ժողովրդի ընդհանուր բարդ հոգեբանական դաշտում դարձավ հենց այն զարտուղի երեւոյթը, այն նոր գոյացությունը, որ իբրև օտարոտի ընկալվեց Հայրենիքում «տեղացիների» կողմից, իսկ մյուս կողմից էլ, գուցե խորքում ստալինյան նենգանպատակ (չնոռանանք Սիբիրը) այդ ներգաղթով սփյուռքից պոկված ու արգելափակված, օտարոտիացավ նաև «սփյուռքահայերի» համար: Եվ զարտուղի էլ անուն ստացավ՝ «ախպար»: այդ կես-կարեկից, կես-հեզմական, կես-արհամարհական, երբեմն նույնիսկ կես-թշնամական հորջորջանքը, չզհտես ինչպես ծագած «տեղացիների» լեզվում, կպավ այդ խավին ու մնաց որպես վիրավորական մակդիր: Այս էր իրականությունը՝ ռոմանտիկ մշուշից պատրանաթափ, իրատես բացված աչքերի համար, սակայն դա բոլորովին չէր նշանակում, որ հայրենիքի սերը մարեց հայրենադարձների հոգում, ընդհակառակը՝ խոցվեց ու հիվանդագին բորբոքումներ տվեց: Երեւոյթը հոգեբանական խոր առնչություն ուներ այն «ծննվադայրը տարբեր, հայրենիքը տարբեր» ճակատագրական առիթմիայի խնդրին, որի մասին այն լիալուսին կեսգիշերին սիրտս բացել էի Իսահակյանի առաջ, եւ որ հուզել էր նրան: Ակնարկել էի նույնիսկ, որ այդ առիթմիան, արդեն իսկ բարդ հոգեվիճակ, նուրբ վերաբերմունք է պահանջում հայրենադարձների հանդեպ, իսկ կոպիտ վերաբերմունքը կարող է ավելի բորբոքել այդ վիճակը եւ աղետի, «ողբերգության հասցնել»: Այդ բառերով էլ ակնարկեցի միայն, ավելի խորանալ չէի հանդգնի, անշուշտ, ոչ թե պարզապես կոպիտ, այլ ուղղակի հանցագործ վերաբերմունքի մասին, բայց Իսահակյանը հասկացավ ակնարկս, երկար խոսեցինք հենց այդ ամայի փողոցում լիալուսին կեսգիշերին, թե ինչպես կարող է «բուժվել» այդ առիթմիան: Նա հետաքրքրվում էր նույնիսկ, թե իմ մեջ, օրինակ, ինչպես է լուծվում այդ հարցը, այդ անիծյալ առիթմիան, որը ես կոչել էի «ճակատագրի չար կատակ, դաժան կատակ»: Այն էլ ասեմ, որ ես այդ ժամանակ չէի կարող պատկերացնել, անշուշտ, թե իմ այդ նախագագացած կամ, ավելի ճիշտ, հոգեբանական ընդհատակյա տրամաբանության թելադրած «աղետը» ինչպես ի հայտ կգա, ինձ ձեւ կստանա...

Գերսամից չնեղացա բոլորովին, բացի առաջին պահի տհաճ զգումներից հյուրանոցի սպասարահում, իմ կողմը զգված այդ «Չեսթրոֆիլը»-ով: Հետո հիշեցի նրա բնավորությունը. շուրջիններին մի քիչ վերելից նայող տիրակաճորեն, մի քիչ անտարբերի նման, երբեմն էլ նույնիսկ կոպտավուն թվացող՝ իր ժպիտով հանդերձ, բայց հենց այդ բնավորության շնորհիվ էլ անկեղծ հաճախ, իր շփի-շիտակ «իջիր»-ով ասված խոսքով մտածել տվող, թեկուզ դիմադրելու մղում առաջացնելով

հանդերձ: Ճիշտ եղավ, որ Էջմիածնի բակում, թեկուզ պատահաբար տեսնելով, մոտեցա նորից նրան: Հագիվ թե հյուրերից ուրիշ որեւէ մեկը այդպես անկեղծ արտահայտվեր: Դա էր, որ առաջին անգամ աչքերիս բացեց «վիհը» նաև այդ կողմից:

Նրա հետ հեռորդ հանդիպումը եղավ մոտ մի տասնամյակ հետո: Գշտրիտ չեմ հիշում ո՞ր թվականին էր եկել էր կրկին: Այն ժամանակ ես, ընտանեկան պատճառներով, կնոջս ու երեխայիս հետ ապրում էի վարձու մի նկուղում, ուր մտնելու համար յոթ դռներից պետք էր անցնել, ու մանավանդ՝ այդ ծանր պայմաններում օրն ի բուն նվիրված էի կլանող մի գործի՝ Դոստոևսկու «Կարամազով եղբայրներ» վիթխարի վեպի թարգմանությանը: Եվ ինչպես միշտ՝ այնպես էր կլանել ստեղծագործական, ամեն ինչ մոռացնող աշխատանքը, որ մի օր անգամ չէի կարող ընդհատել, ոչ կիրակի, ոչ տոն օր: Ականջիս հասել էր, որ Գերսամն է եկել, նախկին աշակերտները վազում են նրան տեսնելու, իսկ ես չէի վազել, ցանկություն էլ չունեի, ճիշտն ասած: Իմացել էի, որ նա նշանավոր դեմք է արդեն, ազգային-հասարակական, կուսակցական, մշակութային ղեկավար գործիչ այնտեղ՝ այն աշխարհում, բայց, խոստովանեմ, քսան տարի հետո հեռու էր թվում այդ աշխարհն իր խնդիրներով, ես ճգնավորի նման իմ գործն էի անում յոթ դռների ետև վարձու, կիսամութ նկուղում, ուր հեռախոս էլ չկար, գրեթե ոչ ոք չզհտեր անգամ, թե ուր եմ ապրում: Եվ մի օր այդ յոթ դռների ետևում ինձ գտավ մեկոնյանցի Հովսեփ Ասատրյանը, որ Հայաստանում դարձել էր հայտնի ֆուտբոլիստ: Եկել էր ինձ անոթանք տալու, թե Գերսամը ուզում է ինձ տեսնել, քանի անգամ հարցնում է, ոչ ոք չզհտի էլ ուր եմ, ինքը հագիվ գտավ, ինչո՞ւ չեմ գնում մոտը, ամոթ է, անպայման գնամ: Անկեղծ ասած՝ թե՛ զարմացա, թե՛ իրոք անհարմար զգացի: Բայց ինչո՞ւ է ուզում ինձ տեսնել, անձամբ էլ ասել է Հովսեփին: Դա հետաքրքրությունս շարժեց, անշուշտ, ավելի եւս՝ նախկին կարոտը ջերմացրեց սիրտս հանկարծ, եւ նույն օրն իսկ երեկոյան, ինչպես ասել էր Հովսեփը, գնացի նրան գտնելու «Արմենիա» նոր մեծ հյուրանոցում:

Երեւանյան խաղաղ երեկոյի մթնշաղն էր իջել իր հաճելի կապույտով, հենց հյուրանոցի առաջ էլ տեսա նրան մի քանի աստիճանների վերելում կանգնած, հանգիստ խոսում էր մեկի հետ: Նույն բարձրահասակ Գերսամը՝ այժմ մուգ գույնի բեժ կոստյումով, եւ բավական գիրացած՝ ավելի հաղթանդամ էր թվում, ակնոցավոր դեմքն էլ լայնացած ու կարմրավուն: Բարեւեցի՝ «եկա» ասելու նման, ինքն էլ վերելից ժպտաց սովորականի նման, շարունակեց իր հանգիստ, անտարբեր թվացող խոսակցությունը կողքինի հետ, որ երեւում էր՝ հյուրանոցում ապրող «դրսի» հայ էր նույնպես, անծանոթ: Քաղաքավարությունն ստիպեց մի երկու քայլ հեռու կանգնել վարի աստիճանին՝ ականջալուր չլինելու համար խոսակցությանը: Ու բավական մնացի այդպես կանգնած, շվարում, նայելով մթնող հրապարակին, վառվող լույսերին: Բոլորովին չի երեւում, որ իսկապես ուզեցել է ինձ տեսնել: Հիմար վիճակում էի զգում ինձ: Ինքս քառասուննոց արդեն, նա սիրուննոց է ուրեմն, լուրջ մարդիկ ենք վերջապես: Արտիս մեջ կայծ տված ջերմությունը, որ ինձ մղել էր գալ, վրդովմունքի էր վերածվում, ուզում էի «ցտեսություն» ասել ու հեռանալ, բայց հանկարծ ինքը, թողնելով կողքինին, դարձավ ինձ.

- Քալե իջնենք բար, ուխքի մը առնենք:

- Ես իրավունք չունիմ հոն,- ասացի,- լսած եմ՝ օտար դրամով է:

- Քալե,- ձեռքը շարժեց:

Մտանք հյուրանոց, իջանք այդ բարը, ուր առաջին անգամ էի լինում: Նստեցինք մի սեղանի երկու կողմը: Ինքը՝ ետ հենված, փռվելու նման: Երկու ուխտի պատվիրեց առույցով: Ես առհասարակ «խմող» չեմ, իսկ ուխտի երեք չէի խմել, առարկեցի, որ ինձ համար չպատվիրի: Ակնոցի տակից նայեց մի շեղ ժպիտով, կարեւորություն չտվեց առարկության: Սպասում էի, թե ինչ է ասելու, բայց չէր խոսում, այդ ակնոցի տակից մի տեսակ ծուլ թվացող հայացքով երկար նայում էր այս կողմ, այն կողմ, մերթ ընդ մերթ ընկալելով ուխտի: Փորձում էի ինքս խոսակցություն բանալ, հարցեր տալով «այնտեղի» իրենց կյանքի մասին, իր գործունեության մասին: Կցկտուր, բան չասող պատասխաններ էր տալիս ավարկոտ ձայնով: Ավելի ու ավելի հիմար վիճակում էի զգում գարնացած, ներքուստ վրդովված, ինքս էլ արդեն ծուլացածի նման նստած մնալով, վրդովմունքս էլ ծուլացած սպասելով չգիտես ինչ բանի: Դիտում էի մյուս մի քանի սեղանների մոտ նստած «դրսի» մարդկանց», որ մեղմ խոսում էին, դիտում էի ընդհանրապես այդ բարը եւ սպիտակ բաճկոններով բարմեն տղաներին իրենց զարմանալիորեն բարեկիրթ, հաճոյակատար դեմքերով, նման բան չէի տեսել սովետական իրականության մեջ, օտարոտի էր թվում, կարծես ակակնկալ մի հրաշքով արտասահման ընկած լինեի:

Շատ երկար նստեցինք այդպես ծուլ-ծուլ, գրեթե առանց խոսելու, ինքը մեկ թե երկու ուխտի էլ պատվիրեց իրեն համար: Մտքովս անցավ, որ երեւի կարգին «խմող» է դարձել երբեմնի մեր «խորունկ իդեալներ թելադրող» երիտասարդ ուսուցիչ, սքանչելի վոլեյբոլիստ պարոն Գերսամը: Ի վերջո վեր կացավ, թե գնանք դուրսը նստենք հրապարակում, ինքը ուշ է քնում, քուն չունի ընդհանրապես: Ուրեմն իր անքնության ընկերն են դառնում: Շատ լավ, դեռ սպասեմ տեսնեմ, երեւի մի բան ունի ասելու վերջապես, եթե Զոլսեփին ուղարկել է, որ գամ իր մոտ: Բավական ուշ գիշեր էր արդեն, հրապարակը մութ, նստեցինք ավագանի առջեւ դատարկ նստարաններից մեկին: Գրեթե ամայի էլ էր հրապարակը, հեռվում հատուկեմտ անցորդներ: Բայց մի երկու ստվեր էլ նկատեցի մեզանից քիչ հեռու նստարանին. սիրահար զույգ, տղան ծխում է, դե լավ, ոչինչ: Ձով օդից երեւի աշխուժացած, սկսեց որոշ հարցեր տալ մեր պարոն Գերսամը, այս անգամ ինքս էի կցկտուր պատասխանում, զգույշ-զգույշ, ցածրաձայն: Եվ հանկարծ իր «իջիր»-ը արեց:

- Դուք չեք գիտեր ինչ է ազատությունը,- ասաց:

Երկար զապված վրդովմունքս հանկարծ պայթեց քահ-քահ ծիծաղով:

- Ինչո՞ւ կխնդաս,- հարեց լուրջ-լուրջ, հիմա էլ ինքը վրդովվածի նման:

- Շատ շնորհակալ եմ, որ հիշեցուցիր,- ասացի:- Ասո՞ր համար դրկեր էիր Զոլսեփը, որ անպայման գամ քեզ տեսնելու:

- Դուք չեք գիտեր,- կրկնեց:- Մոռցած եք: Ասիկա քեզի կրքեմ, որովհետեւ լավ կհիշեմ քու խելոք ըմբոստացումներդ ժամանակին:

- Չունեցողը, կկարծեմ, ավելի լավ գիտե,- ասացի:- Մանավանդ ան, որ ունեցած է այդ բարիքը եւ կորսնցուցած: Ես ալ լավ կհիշեմ: Ինչպես պատռեցիր գրածս՝ Աստուծո մասին այն հարցով: Այդ մեկ «ըմբոստացումս» երբեք չեմ կրնար մոռնալ,- ժպտացի:

- Կարծեմ ըսի՞ շուտ է քեզի համար: Քանի՞ տարեկան էիր որ:

- Տասնհինգ: Այո, այդպես ըսիր:

- Ճիշտ չե՞մ ըսած:

- Այդ «ճիշտ» կոչվածը շատ հարաբերական բան է, մանավանդ մետաֆիզիկ հարցերու վերաբերյալ, որոնք դարերով տանջած են մարդկության միտքը:

- Մետաֆիզիկ՞: Չըլլա դեռ միտքդ կզբաղեցնես ատանկ պարապ հարցերով:

- Ոչ այնպես միանորրեն, ինչպես տասնհինգ տարեկանիս, բայց... Ըսիր՝ պարա՞պ: Է՛հ, մեկուն համար պարապ, մյուսին համար էական: Թերեւս խառնվածքի բան է: Մարդ ինչպես կնայի կյանքի, գոյության բուն իմաստի հարցին, որքան զինք կհուզե կամ չի հուզեր:

- Դուն պետք է Բեյրութ գայիր: Դոն հասուննայիր, հոն էիր պետք... Բեյրութի ազատությունը ուրիշ ոչ մեկ տեղ կգտնես: Ուզածիդ պես խոսե, ուզածիդ պես գործե, ուզածիդ պես գրե:

- Ըսածիդ նայելով, ատիկա կրնա սանձարձակության ալ հասնիլ եւ փորձանք բերել: Ոչ միայն անհատին, հասարակության ալ գլխուն: Ազատությունը, անշուշտ, կսիրե լայն ըլլալ: Որոշ հարցերու պարագային, մանավանդ ստեղծագործական անսահմանորեն լայն: Բայց, կկարծեմ, կան հարցեր ալ, որոնք իրենց բնականորեն տրամաբանական, անհրաժեշտ սահմանը ունին: Բնությունն իսկ չի հանդուրժեր խախտել այդ սահմանը, չի հանդուրժեր նաեւ ազատության ծայրահեղ սահմանափակումը...

- Կտեսնեմ, որ կշարունակես փիլիսոփայել ուրեմն:

- Խառնվածք է:

- Բայց նորեն ալ կըսեմ՝ դուք չեք գիտեր ինչ է բուն ազատությունը:

- Ես ալ նորեն կըսեմ չունեցողը, եթե գիտակից մարդ է, մտածող մարդ է, ավելի լավ գիտե գոնե ատոր բուն արժեքը:

- Չգե, վագ անցնինք փիլիսոփայելեն: Ազգովին մեկ հիմնական խնդիր ունինք, այդ է իմ մտահոգությունս, այդ է, որ ձեզի ալ կթելադրեի ժամանակին:

- Այո: Բոլորիս մտահոգությունն է, փիլիսոփայենք կամ ոչ: Բայց գիտե՞ս ինչ, Գերսամ,- ասացի, առանց «պարոն»-ի արդեն,- կյանքիս կեսը հոս անցավ, քսան տարի մը: Ոչ թե հոն հասունցա ըսածիդ պես, այլ հոս: Ինչքան որ հասունցա ու դեռ պիտի հասուննամ: Բայց հոս՝ Զայաստանի մեջ: Սա ուրիշ որակ է արդեն, խտացած հասունացում մը, բացատրել չըլլար, պիտի ապրիս: Մանավանդ հայրենադարձի փորձառությունը: Ես քու գիտցածդ չեմ այլևս: Մի՛ վախճար, չեմ զանգատիր: Գանգատիլ չեմ սիրեր: Կսիրեմ վերլուծել ու համադրել: Պատանեկությանս ալ...

- Կհիշեմ, կհիշեմ: Ոչ միայն շուտ ըմբռնելու եւ վերլուծելու հակումդ: Ուրիշ բաներ ալ: Կակազությունդ բուժելու կամքդ եւ հաջողիլդ գիս հիացուցած է, ուրիշներուն օրինակ բերած են: Ի զուր չէ, որ ձեռքս վրադ դրած էի...

- Երբեք չեմ մոռցած, Գերսամ: Ես ալ կապված կզգայի քեզի, ուղղակի ըսեմ՝ կսիրեի, թեպետ երբեմն «կըմբոստանայի» ալ, ինչպես կըսես: Երբ ձգեցիր զացիր Բեյրութ, չես գիտեր ինչքան տխրեցա, կարծես լքված ըլլայի քեզմե: Դեռ հագիվ տասնյոթիս էի մտած այն ատեն... Լավ, ինչեւէ: Մեր այդ մեկ հիմնական խնդիրը, որ շեշտեցիր, իմ ալ մտահոգությունն է անշուշտ, դեռ մանկուց, ինչպես մեր սերունդի բոլոր տղոց, ըսի արդեն: Ալ չըսեմք մեր ծնողներուն մասին: Բայց այդ հիմնական խնդիրը ավելի բարդ, խոր եւ... եւ ավելի մտահոգիչ կերեւա հոսկե՞ Զայաստանն: Առավել եւս՝ հայրենադարձի փորձառությամբ...

- Է՛հ, վերլուծե նայինք, հասկնանք:

- Չէ, չեմ ուզեր վերլուծել: Կվախնամ հասկնալի չըլլա: Ոչ տեղացիները հոս կհասկնան ըստ էության, ոչ ալ դուք՝ հոն: Կներես, բայց ըսեմ այն ալ, որ ձեր այդ կուսակցական վեճերն ու բախումները, հոն, ինձի հեռու բաներ կթվին արդեն: Չէ, անձնապես ինձի թվիլը չէ, բուն այն հիմնական հարցն է, բուն մտահոգութենն հեռու բաներ: Այսօր տխուր իրողություն մը կա, անդրադարձած էս ատոր ինչպես պետք է:

- Ի՞նչ իրողություն:

- Հայրենադարձներու արտագաղթը, որ սկսած է ծայր առնել:

- Սենք հոն կտրականապես դեմ ենք ատոր, հայրենադավություն կեսպենք:

- Ահա խնդրեմ ինչ կնշանակէ չհասկնալ: Փաստը կա, փոխանակ ջանալու խորքը թափանցել, հասկնալ ինչը ինչոց է, կանխակալորեն կդատապարտեք վերին հայացքով մը: Ի՞նչ օգուտ ատկէ: Հոս ալ ոմանք այդպիսի վերին հայացքով կդատապարտեն:

- Դուն չե՞ս դատապարտեր:

- Չեմ արտագաղթեր, թեպետ շատ խոր են խոցված, բայց չեմ ալ կրնար դատապարտել, որովհետեւ խորքը գիտեմ: Հայրենադարձները մեղավոր չեն:

- Կկռահեմ ինչ ըսել կուզես, բայց...

- Բայց չկա, փաստը կա: Կանխագագած են, որ կրնար ըլլալ, պիտի ըլլար: Այդպիսի ներգաղթեն՝ այսպիսի հետեւանք: Շատ մտահոգիչ, թերեւս ազգային նոր տեսակ աղետի մը սկիզբը, որ չեմ գիտեր ուր կրնա հասցնել... Չէ, չեմ խորանար, շատ բարդ են պատճառները, չեմ ուզեր խորանալ: Չեմ ալ ուզեր վիճիլ, չէ, ավելորդ է, վախնամ չենք հասկցվիր: Իրավունք չունիմ բուն պատճնառներն ալ լրիվ բանալու: Այս խոսակցությունն ալ շատ էր արդեն: Եվ կխնդրեմ մանավանդ մեր մեջ մնա: Ոչ հոս, ոչ հոն: Գոնե այս խնդրանքս կհասկնաս, անշուշտ, ինչքան գիտեմ քեզ, ձեր հոնտեղի «ուռռա» միամիտներն չես: Մտածելու նյութ միայն, ուրիշ ոչինչ...

Այդ գիշեր ինքս էլ երկար մտածում էի, հապճեպ գրի առնելով նաեւ այս բոլորը, բայց ոչ օրագրի տետրիս մեջ, ուր այն ժամանակ խուսափում էի այսպիսի բաներ արձանագրելուց, այլ «Կարամագով եղբայրներ»-ի թարգմանված էջերի դեգերում նույն թղթի վրա նույն թանաքով: Մտածում էի, թե ահա ինչ ձեւ ստացավ այն աղետը, որ նախագագացել էի եւ մի երկու բառով ակնարկել նույնիսկ, երբ այն գիշեր սիրտս էի բացում Իսահակյանի առաջ: Նախ պայթեց ֆրանսահայ հայրենադարձների ցույցով օղակայանում, երբ Հայաստան էր եկել Ֆրանսիայի պետական մի դեմք՝ կարծես Պինեն, պահանջի ցույց, թե ուզում են Ֆրանսիա վերադառնալ, եւ այդտեղից էլ ստացավ այդ ձեւը՝ արտագաղթ, որ այսպես սասած «շղթայածեւ ռեակցիա» էր տալիս արդեն: Օ՛վհր կոչված հիմնարկը դիմադրում էր արգելքներ հարուցելով, բայց անօգուտ: Եվ բանը նույնիսկ արտադրի էր հասնում: Այդ ժամանակ ներսից սկսվում էր նաեւ «արտասահմանյան» տուրիզմը, բայց հայրենադարձներին թույլ չէին տալիս որպես անվտանգներին, եւ երբ իր ազգականներին այցելության գնալ ուզող հայրենադարձը, որպես տուրիստ մերժվելուց բարկացած, դիմում էր տալիս արտագաղթելու եւ համառորեն հետապնդում, ի վերջո թույլտվություն էր ստանում վերջնականորեն գնալու Հայաստանից, իմա՝ Սովետական Միություն կոչված... արգելափակոցից, չասելու համար բանտից: Նո՛ր վիհեր...

Մի տասնամյակ եւս առաջ գնամ, խղճիս վրա ծանրացած մի անըրբանկատ խոսքս քավելու համար: Իսահակյանի հարյուրամյակն էր 1975-ին: Կիրմետորանոց երկար մի ավտոշարասյուն Լենինական էր գնում տոնակատարության համար: Ավտոշարասյունը կանգնեցրին Մարալիկում, ուր կենտրոնական փողոցում հյուրասիրության երկար սեղաններ էին բացված՝ արտակարգ մածուն, լավաշ ու կոտեմ: Արտասահմանյան հյուրերից շոտլանդացի գրող լորդ Սըր Ֆրիցրոյ Մակլինը շվարած կանգնել էր սեղանի առաջ, այդ մածունը ավորժակով ճաշակող բազմության մեջ իր լող-լող հասակով: Բացատրեցի նրան, թե ինչ է այդ մածունը, լավաշը, կոտեմը, ցույց տվի, թե ինչպես պետք է ուտել, եւ նա, համն առնելուց հետո, հրճվանքով ճաշակում էր, հոգ չէ թե մածունն էլ կաթում էր բերանի երկու կողմից: Այդ պահին մի ձեռք իջավ ուսիս:

Ետ նայեցի՝ Գերսամն է:

- Օ՛, ուրկե՞ հանկարծ,- բացականչեցի անակնկալի եկած:

- Ձիս օղակայանն ուղղակի հոս բերին,- նվաղկոտ ժպտացին աչքերը ակնոցի ետեւ:- Դժվար էր գալը, ուշացեր էի: Գիտես հոն Բեյրութի վիճակը...

Ո՞ր սատանան դրդեց հանկարծ անըրբանկատորեն ասելու.

- Կհիշե՞ս այն գիշերը՝ թե սանձարձակ ազատությունը կրնա փորձանք...

Եվ իսկույն խղճի խայթը փակեց բերանս, կարծես նոր նկատեցի դեմքը ուռածի մեծ ու խիստ կարմրած:

- Հիշեցնելու ժամանակը գտար դուն ալ,- մտահոգ մռայլվեցին աչքերը: - Օղակայան իջա թէ չէ՝ լսեցի, որ նորեն սկսեր են ռմբակոծությունները հոն: Երանի չգայի, շատ մտահոգ եմ...

- Ա՛հ, կներես, Գերսամ, սիրելիս, հիմարություն էր, բերնես փախավ...

Ու թելը մտա, շոտլանդացի լորդին «Excuse me»* (*Ներեցեք - անգլ.*) ասելով, քաշվեցինք մի կողմ: Էլ աչքիս չէին երևում տոնական բազմությունն ու սեղանները: Ես հիսունուց արդեն, ու նա էլ ուրեմն վաթսուցնոց: Մի ամբողջ կյանքի խորքից, երբ ես այն պատանյակն էի ու նա իմ ուսուցիչը, եկավ հարազատության զգացումը մեկնել: Կարծես չքացավ, չէր էլ եղել այն «վիհը» մեր միջեւ: Ամբողջ այս բազմության մեջ կա՞ ուրիշ մեկը, որ կարենա սրտանց հասկանալ նրան... Բայց թույլ չանցած՝ երկու «պաշտոնավորներ» շտապեցին մեր կողմը, ողջունելով սփյուռքի ականավոր ազգային-հասարակական-քաղաքական գործչին, ու նրան առաջնորդեցին «ղեկավարության» մոտ: Մի երկար թույլ նայեցի նրանց ետեւից, հետո ինքս էլ վերադարձա Սըր Ֆրիցրոյի մոտ, կրկին մի «Excuse me» ասելով: Ի դեպ, այդ լորդ գրողը, որ Իսահակյանի հարյուրամյա հոբելյանին եկած բազմաթիվ սովետական եւ մի քանի օտարերկրացի «գրական» հյուրերից մեկն էր, երկու օր առաջ, «Անի» հյուրանոցի վերնադասում, ընդհանուր ճաշի ժամին, զանգատ էր հայտնել, թե ինչու հայ գրողներից ոչ ոք չի մոտենում իրեն, եւ մեր Գրողների միության նախագահ Վարդգես Պետրոսյանը ինձ հանձնարարել էր, որ ճաշեմ նրա հետ ու հետո ուղեկցեմ այդ օրերին. այլապես չէի հանդգնի, մտքով էլ չէր անցնի մոտենալ նրան, մանավանդ որ տեսնում էի՝ Մոսկվայից կցված մի ռուս ակնոցավոր լրջադեմ ուղեկից կար նրա կողքին:

Գերսամին տեսնում էի հեռվից, ջոջերի հետ է: Երեւի այնտեղ հարցեր են տալիս նրան Բեյրութի դրության

**ԹՈՒՐԲԻԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՅԱԲՆԱԿ ԳՅՈՒՂՆ՝
ՎԱՔՐՖԼԻ**



Փարիզի «Լիբերասիոն» թերթը նյութ է հրապարակել Միջերկրական ծովի հյուսիս-արևելքում՝ Անտիոքի եւ Ալեքսանդրետի միջեւ ընկած Վաքրֆլի գյուղակի մասին, որը Թուրքիայի տարածքում մինչեւ օրս պահպանված հայկական վերջին բնակավայրն է: Թերթի հատուկ թղթակից Մարկ Սեմոն գրում է, որ Վաքրֆլին մեկն է Մուսա կամ Մովսես լեռան 7 հայկական գյուղերից, որոնց 3000 բնակիչները 1915 թ. գարնանը, 40-օրյա ինքնապաշտպանական մարտերից հետո, ստիպված լքեցին իրենց բնօրրանը եւ ֆրանսիական ռազմաճակատներով մեկնեցին Պորտ Սայիդ (Եգիպտոս):

Գլխավորապես ցիտրուսեղենի մշակությամբ զբաղվող Վաքրֆլի գյուղակն այսօր ընդամենը 150 բնակիչ ունի: Ամբողջ Թուրքիայում մնացել են 60-80 հազար հայեր՝ մեծ մասամբ Ստամբուլում, որտեղ ունեն երկու տասնյակ դպրոցներ, լիցեյ եւ երկու օրաթերթ: Վաքրֆլիում վերականգնվել եւ գործում է Սուրբ Աստվածածին եկեղեցին: Գյուղը հայաբնակ վերջին կղզյակն է Թուրքիայի տարածքում: Մարկ Սեմոն արձանագրում է, որ գյուղում ամենքը խոսում են հայերեն, դարպասների քարերին խաչեր են փորագրված:

Ներկայումս Վաքրֆլիում մնացել են ծեր եւ տարեց բնակիչներ: Գյուղի կենտրոնում կառուցված է մի մեծ հյուրատուն: «Վերջին երկու սերունդների բոլոր երիտասարդները հեռացել են: Հյուրատունը նրանց համար է, ովքեր վերադառնում են, բայց այստեղ այլեւս չունեն մոտիկ ազգականներ», պարզաբանում է 80-ամյա Աշոտ Մարտիրոսյանը, որը 20 տարի անցկացրել է Ֆրանսիայում: Նրա երկու որդիներն այժմ էլ ապրում են Ալֆորվիլում:

Գյուղի ծայրին կա դիարան, որտեղ պահվում են հանգուցյալները, մինչեւ որ նրանց հարազատները գան աշխարհի տարբեր կողմերից:

Վաքրֆլիում աճեցվող ցիտրուսեղենը հայտնի է բարձր որակով եւ վաճառվում է բավական լավ գնով: Այս առումով գյուղը բարեկեցությամբ հստակորեն տարբերվում է շրջակա բնակավայրերից, որոնք եւս անցյալում հայաբնակ են եղել:

Գյուղապետը նախընտրում է քիչ խոսել 1915 թ. հայկական կոտորածների մասին, թեև ցեղասպանության հարցն անամոք ցավ է պատճառում: «Այստեղ վիճակը տարբեր է սփյուռքից կամ նույնիսկ Ստամբուլից: Մենք նախընտրում ենք էջը շրջել եւ եղբայրաբար ապրել մեր հարեւանների հետ», ասում է գյուղացիներից մեկը: Մի թոշակառու խոստովանում է, որ իր ծնողները եւ պապերը քիչ են պատմել ցեղասպանության մասին, որպեսզի «փշրեն վրիժառությունների շղթան»:

90-ամյա Ավետիս Դեմիրճյանի պապը եւ հորեղբայրը ցեղասպանության զոհեր են: Ծերունին հիշում է հոր պատմածները 1915 թ. գյուղում ստացված տեղահանության հրամանի եւ դրան հաջորդած ինքնապաշտպանական մարտերի մասին: Առաջին աշխարհամարտի ավարտին 1918 թ. ֆրանսիացիները Պորտ Սայիդից հետ բերեցին մուսալեռցիներին, Սիրիան հռչակեցին խնամակալ տարածք, դրան կցելով Ալեքսանդրետի սանջակը Մուսա լեռան գյուղերով: Դպրոցում Ավետիսը սովորել է թուրքերեն, հայերեն եւ ֆրանսերեն: Բայց 1938 թ. բնակչության մեծ մասը որոշեց միանալ Թուրքիային (այս պնդումը սխալ է. Ֆրանսիան լքեց հայերին: Ծ. Խ):

«Մուսա լեռան հայերն ահաբեկված էին: Վեց գյուղերի բնակիչները որոշեցին հեռանալ Լիբանան կամ Սիրիա: Մենք տատանվում էինք: Հիշում են թուրք սպաներից մեկի խոսքերը. «Մեր հայրերը կռվել են, բայց մենք միասին ենք ապրելու»: Մենք մնացինք եւ որեւէ խնդիր չունեցանք», պատմում է 90-ամյա ծերունին:

Անկարայի իշխանությունները հայկական վերջին գյուղի գոյության փաստն օգտագործում են քարոզչական նպատակներով, խոսելով Թուրքիայում ազգային փոքրամասնությունների իրավունքների հարգման մասին: Գյուղում երբեմն կազմակերպվում են «խաղաղության» համերգներ եւ սեմինարներ: Բայց Վաքրֆլիի տարրական դպրոցը փակ է երեխաների սակավության պատճառով: Ավելի բարձր տարիքի աշակերտները հաճախում են հարեւան գյուղի թուրքական դպրոց:

Երեխաները հայերեն սովորում են տանը, ապա գրական արեւմտահայերենին տիրապետում Ստամբուլի լիցեյում եւ ի վերջո բնակություն հաստատում Արեւմուտքի երկրներում, քանզի Վաքրֆլիում աշխատանք չեն գտնում: Սա է դատարկվող հայկական գյուղի տխուր պատմությունը:

Պատրաստեց Պ. ՔԵՇԻՇՅԱՆԸ

մասին: Քաղաքացիական անհեթեթ պատերազմ, երեւի մութ ուժերից հրահրված (ո՞վ կարող էր ենթադրել, որ տեւելու էր տարիներով ու լինելու էր այնքան ավերիչ): Ահա մի նոր աղետ, սա էլ բեյութաբանության՝ այդ ամենահոծ, տոհմիկ մթնոլորտով հարատեւած, նույնիսկ «փոքր Հայաստան» համարված գաղթօջախի գլխին: Լսել են, որ այնտեղից էլ շատ հայեր ուզում են հեռանալ, եւ «Անչա» կոչված մի ամերիկյան կազմակերպություն նպաստում է դրան: Հայաստանից արդեն թափ է առել արտագաղթը, ու այնտեղից էլ, ուրեմն, արտագաղթ... Այստեղից էլ, այնտեղից էլ՝ դեպի ո՞ւր է հոսում արտագաղթը: Ամերիկա: Ժողովուրդների այդ ամենակուլ վիթխարի ծուլարանը՝ «կաթսա» կոչված: Ականջիս հնչում է հայ դարիքների այն թուրքերեն երգը, որ մանկուց լսել են պատմական ճակատագրով թրքախոս դարձած իմ տատից. «Ամերիկա գնացինք, այսպես այնպես եղավ, Ամերիկայից եկանք, այսպես այնպես եղավ, ո՞չ գնացած լինե՞ինք, ո՞չ եկած լինե՞ինք»...

**ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 70-ԱՄՅԱ ՃԱՆԱՊԱՐՀԸ**

Օտար լեզուների փայլուն իմացության հենքը մայրենին է եւ առանց հայերենի խոր ու գրագետ իմացության անհնար է ճանաչել այլ լեզուների մշակույթը, կտրել-անցնել դրանց տարածական սահմանները: Այս

համոզումով է իր 70-ամյա հոբելյանին հասել Երեւանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը՝ զարգանալով ու ընդլայնելով տարեցտարի ավելացրել ուսումնասիրվող լեզուների ցանկը, լավ գիտակցելով դրանց բերած մշակութային ժառանգությամբ հարստանալու ու կրթվելու կարեւորությունը: Համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Սուրեն Ջոլյանը երեկվա հոբելյանական նիստում իր խոսքը համեմեց լեզվի արարչագործ էության ու այլ լեզուների հետ հայերենի շփման վաղեմության փաստերով, որոնցից մեկի համաձայն Տիգրան Մեծի բանակում խոսել են 20 լեզուներով: Մաշտոցյան գրերի գյուտից հետո ծաղկում ապրած թարգմանչական արվեստը եւս օտար լեզուների հանդեպ հայերիս սիրո խոսուն վկայությունն է՝ հայ մանուկները դպրոցներում հունարեն եւ ասորերեն էին սովորում դեռեւս 5-րդ դարում:

Ռուսաց լեզվի ուսուցչական դասընթացներով խորհրդային Հայաստանում 1935 թվականին հիմք դրվեց ռուսաց եւ օտար լեզուների ինստիտուտի ստեղծմանը, որը պահպանելով իր կառուցվածքային ինքնուրույնությունը՝ 1955 թվականին մտավ Երեւանի պետական համալսարանի կազմի մեջ, սակայն 1962 թվականին նորից առանձնացվեց որպես ռուսաց եւ օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտ՝ կրելով Վալերի Բրյուսովի անունը, իսկ 1993 թվականին վերանվանվեց օտար լեզուների ինստիտուտ: 2001 թվականին կառավարության որոշմամբ ինստիտուտին շնորհվել է համալսարանի կարգավիճակ եւ անվանվել է Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան: Իր գործունեության ընթացքում բուհը պատրաստել է շուրջ 18000 մասնագետներ՝ ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի, իտալերենի, իսպաներենի, գործնական հոգեբանության, պատմության, քաղաքագիտության, երկրագիտության եւ այլ մասնագիտությունների գծով: 1963 թվականին բացված ասպիրանտուրայում սովորել են 120 ասպիրանտներ: Ամենահայտնի ասպիրանտը եղել է աշխարհահռչակ շախմատիստ Տիգրան Պետրոսյանը, իսկ համալսարանից հեռացված ուսանողը՝ ԱԺ փոխնախագահ Վահան Հովհաննիսյանը: Հեռացման պատճառը, վերջինիս ասելով, ոչ թե ցածր առաջադիմությունն էր, այլ գաղափարական տարածայնությունները, ու չնայած դրան, համալսարանում ուսանած տարիները անփոխարինելի են եղել, քանի որ այս բուհն էականորեն տարբերվում է ուսանողներին բազմակողմանի գիտելիքներ տալու առանձնահատկությամբ:

Այսօր համալսարանում սովորում է 3200 ուսանող, շարունակվում են կառուցվածքային փոփոխությունները, որոնք մոտ ապագայում հնարավորություն կտան պատրաստելու հանրապետության կյանքին ու տնտեսվարման նոր պայմաններին համապատասխանող մասնագետներ:

Հայաստանի անկախությունից ի վեր զարգացնելով իր ավանդական կապերը՝ համալսարանը դուրս է եկել միջազգային ասպարեզ եւ լեզվաքաղաքականության, լեզուների ուսումնասիրման եւ դասավանդման շրջանակներում համագործակցում է Եվրոպայի խորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԱՊՀ կրթական կառույցների եւ միջազգային այլ կազմակերպությունների հետ: Սերտ կապեր են ստեղծվել Եվրոպայի խորհրդի լեզվական քաղաքականության բաժնի եւ Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Հարավային

Կովկաս» լեզվակրթական ծրագրի, ԱՊՀ խորհրդի



մշակույթների եւ լեզուների խորհրդի, այլ կազմակերպությունների հետ: Համալսարանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համալսարանների եւ լեզվաբանական բուհերի միջազգային ասոցիացիայի անդամ է: Բուհում այսօր դասավանդում են 16 պրոֆեսորներ, 120 դոցենտներ, գիտության թեկնածուներ, որոնց մի մասը երեկ արժանացավ վաստակավոր մանկավարժի կոչման, Մովսես Խորենացու անվան հուշամեդալի, խրախուսական պարգևների, գիտության եւ կրթության նախարարության պատվոգրերի:

«Ձանգեզուրի պղնձամոլիբդենային» մասնավորեցման գործարքն ընդգրկվել է «Տարվա լավագույն գործարք» նոմինացիայում

ԵՐԵՎԱՆ, 1 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Լոնդոնում նոյեմբերի 21-23-ը տեղի ունեցած «Հանքավայրեր եւ ներդրումներ 2005» հանքարդյունաբերության համաշխարհային գագաթաժողովի ընթացքում «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային» ընկերություն մասնավորեցման գործարքն ընդգրկվել է «Տարվա լավագույն գործարք» նոմինացիայի լավագույն վեցյակի մեջ: ՀՀ առևտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար Արմեն Գեւորգյանի խոսքերով, գագաթաժողովի ընթացքում հանձնված մրցանակները համարժեք են կինեմատոգրաֆիայի ոլորտում կազմակերպվող «Օսկար» մրցանակաբաշխությանը, եւ նորմինացիայում ներկայացված լինելն արդեն իսկ լուրջ ձեռքբերում է:

Եվրոպայում Ինտերնետից ամենաակտիվ օգտվողները Ֆրանսիացիներն են

ԼՈՆԴՈՆ, 30 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ֆրանսիացիներն Ինտերնետում շաբաթական միջին հաշվով անցկացնում են 13 ժամ: Այս եզրակացությանն են հանգել այն հետազոտության հեղինակները, որը կատարել է Եվրոպայի ինտերակտիվ գովազդի ասոցիացիան: Երկրորդ եւ երրորդ տեղեր բաժանում են բրիտանացիներն ու իսպանացիները՝ 11-ական ժամ: Նվազագույն ակտիվություն են ցուցաբերում Իտալիայի բնակիչները՝ 8 ժամ, իսկ միջին եվրոպական ցուցանիշը կազմում է շաբաթական 10,5 ժամ: